

Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի (Grinberg v Russia), 2005, Appl. No. 23472/03, Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Թեմա՝ Զրպարտություն
Ենթաթեմա՝ Քաղաքացիական գրպարտություն, կարծիքի կամ գնահատողական դատողությունների պաշտպանություն, հանրային դեմքեր և մարմիններ
Թեսք՝ Անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում
Սանկցիա՝ Օրաթերթի սեփականատերը պարտավորվել է վճարել երկու հարյուր եվրո, իսկ դիմումատուն պարտավորվել է վճարել հարյուր եվրո: Օրաթերթի սեփականատերը պարտավորվել է նաև հրապարակել դատարանի վճիռը:
Վճիռ՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի խախտում
Իրավասություն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան. Ռուսաստան

Գործի հանգամանքները

2002թ.ին Ռուսաստանի վարչական շրջաններից մեկի օրաթերթը հրապարակեց մի նյութ, որը գրել և ստորագրել էր դիմումատուն: Նյութը վերնագրված էր «Իմ հայտարարությունը» եւ ուներ հետևյալ բովանդակությունը.

«Ընտրաթերթիկները դեռ հաշվում էին, սակայն արդեն պարզ էր, որ գեներալ Վ. Ա. Շամանովը Ուլյանովսկի մարզի նահանգապետ է ընտրվել: Այդ նույն երեկո նա բառացիորեն կատարել է հետևյալ հայտարարությունը. «Թույլ տվեք ասել անկեղծորեն, որ տեղական մամուլի հարցով պետք է զբաղվել: Իր նախընտրական արշավի ժամանակ գեներալ Շամանովը շատ խոստումներ է տվել ուլյանովսկցիներին: Կարծում եմ, սակայն, որ նա պահել է այդ խոստումներից մեկը. նա պատերազմում է անկախ մամուլի և լրագրողների դեմ: Շամանովի հայցն ընդդեմ Ուլյանովսկի լրագրող Դիմոնչկինի դեռևս վարույթում է: Բացառիկ է, սակայն, «Միմֆիրսկի իզվեստիա» օրաթերթի գլխավոր խմբագիր Յուլիա Շելամիդովայի դեմ դատական գործը, ինչի արդյունքում խմբագիրը դատապարտվել է մեկ տարվա ազատազրկման: Առկա է նշված գործի բարոյական կողմը, թե ինչպես երեք կատաղի անձինք, որոնցից երկուսը գնդապետեր են, իսկ մեկը՝ Ռուսաստանի հերոս, կարող են պատերազմել երիտասարդ կնոջ դեմ: Հիշում եմ նաև Շամանովի աջակցությունը գնդապետ Բուդանովին, ով տասնութամյա աղջիկ էր սպանել: Ոչ ամոթ, ոչ պատկառանք»:

Պարոն Շամանովը քաղաքացիական գրպարտության հայց էր ներկայացրել դիմումատուի, խմբագրության և օրաթերթի հիմնադրի դեմ:

Շամանովը պնդում էր, որ այն մեղադրանքները, որ ինքը չունի ոչ ամոթ և ոչ էլ պատկառանք, ճշմարիտ չեն և արատավորում են իր պատիվն ու արժանապատվությունը:

Լենինսկի շրջանային դատարանը վճռել էր Շամանովի օգտին: Դատարանը գտել էր, որ դիմումատուի նյութում արված հայտարարությունը, որ հայցվորը չունի ոչ ամոթ և ոչ էլ պատկառանք ճշմարիտ չեն և արատավորում են իր պատիվն ու արժանապատվությունը և գործարար համբավը: Դատարանը որոշել էր, որ հիմնադրամը պետք է վճարի երկու հարյուր եվրո, իսկ դիմումատուն՝ հարյուր եվրո: Հիմնադրամը պարտավորվել էր նաև հրապարակել դատարանի որոշումը:

Դիմումատուն և հիմնադրամը գործը բողոքարկել էին: Դիմումատուն պնդում էր, որ շրջանային դատարանը չի տարբերակել կարծիքը փաստական տվյալներից:

Նա վիճարկում էր նաև այն, որ խնդրո առարկա արտահայտությունը ռուսաց լեզվում ընդհանուր կերպով գործածվում է անձի արարքների գնահատական տալու համար: Դիմումատուն պնդել էր, որ արտահայտվելու ազատության իր իրավունքը խախտվել էր նշված հիմքերով:

Ուլյանովսի շրջանային դատարանը ուժի մեջ էր թողել առաջին աստիճանի դատարանի վճիռը: Դատարանը հաստատել էր առաջին աստիճանի դատարանի եզրակացությունները և ավելացրել. «Պնդումներն այն մասին, որ դատարանը չի տարբերակել գնահատողական դատողությունը փաստերից չի կարող հիմք ընդունվել, քանի որ կարծիքը հրապարակվել է մամուլում և հրապարակման պահից դարձել է փաստական շարադրանք»:

Ռուսաստանի գերագույն դատարանը վարույթ չի ընդունել վճռաբեկ բողոքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերլուծությունը և եզրակացությունը

ՄԻԵԴ-ը նշել է, որ գրապարտության մասին Ռուսաստանի օրենսդրությունը չի տարբերակում փաստական տվյալը գնահատողական դատողությունից: Ներպետական դատարանները չեն իրականացրել որևէ վերլուծություն գտնելու, որ խնդրո առարկա հայտարարությունը հանդիսացել է գնահատողական դատողություն, որը ենթակա չէր ապացուցման: Եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուի արտահայտությունները հանդիսացել են գնահատողական դատողությունների տիպիկ օրինակ, երբ դիմումատուն սուբյեկտիվ գնահատական է տվել պարոն Շամանովի բարոյական նկարագրին: Այդ պատճառով հաստատվել է, որ հնարավոր չէր ապացուցել այդ դատողության ճշմարտացիությունը:

ՄԻԵԴ-ը գտել է, որ հողվածն առնչվել է հանրային շահին, և դիմումատուն իր տեսակետն արտահայտելիս գերծ է մնացել վիրավորական տոնից:

ՄԻԵԴ-ը գտել է նաև, որ ներպետական դատարանները համոզիչ կերպով չեն հաստատել, որ առկա է եղել հանրային շահ քաղաքական գործչի անձնական իրավունքները դիմումատուի խոսքի ազատության իրավունքից վեր դասելու համար այն պարագայում, երբ խոսքը գնում էր հանրային շահին վերաբերող հարցերին: Մասնավորապես՝ ներպետական դատական ակտերից պարզ չի, որ դիմումատուի հայտարարությունն ազդել է պարոն Շամանովի քաղաքական կարիերայի կամ նրա մասնագիտական կյանքի վրա: Այդ իսկ պատճառով, ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ խախտվել է դիմումատուի ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքը: